

**«ՀՀ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՅՏՄԲԵՐՅԱՆԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԱՐՏԱՔԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԵՐԻ
ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ և ՕԿՋ-ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ և ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/71

ք. Երևան

«31» հուլիսի 2019թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «**ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏՇԻՆ**» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն **Նորիկ Խեչեյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ, Տավուշի մարզի Նոյեմբերյանի Խմելու քրի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման, խորքային հորերի և ՕԿՋ-հիմնանորոգման և կառուցման» աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Ֆինանսական միջոցներ նախադրեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015

թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **50,880,000 (հիսուն միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ**, որից **8,480,000 (ութե միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = V_9 / N_9 \times Y_9$, որտեղ՝

V_9 -ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է³³.

N_9 -ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

Y_9 -ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

V_9 -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

³³ Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա V_9 -ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով³⁴: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂՁԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

³⁴ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:
Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:³⁸

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլինեցու 31
Հեռախոս՝ +374 60 501 560
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան



Կ.Ս
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏԵԻՆ» ԲԲԸ

Հասցեն՝ ՀՀ, Տավուշի մարզ,
գ. Ագատամուտ

ՀՎՀՀ՝ 07600534

Հ/Հ՝ 247610053503

ԲԱՆԿ՝ Արդշինբանկ ՓԲԸ Իջևան մ/ճ

Տնօրեն

Նորիկ Խեչյան



Կ.Ս
/ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը
չհակասող դրույթներ:

³⁸ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ճավալաթերթ-նախահաշիվ*

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգում, խորքային հորերի և ՕԿՁ-հիմնանորոգում և կառուցումն աշխատանքների կատարման

NN ը/կ		Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
Ձուլքան գյուղի խմելու ջրի արտաքին ցանց ՕԿՁ-ի ցանկապատի վերևի						
1	1	Պողպատե խողովակի մոնտաժում d =32*3 մմ	մ	9,600	1,709	16,41
2	1	Մետաղական մակերեսների համակոռոզիոն ներկում 2 շերտ	100մ ²	0,001	56,574	0,06
3	1	Ցինկապատ փշալարերի անցկացում ցանկապատի վերևի մասում 3 շարք	մ	129,000	0,987	127,32
4	1	Ամրալար Ա-1 Մ6	տ	0,0095	701,743	6,69
5	1	Գաբիոնի ցանցապարկ 1x0,5x0,5	հատ	7,0	4,413	30,89
6	1	Կապելու լար /1հատին 4մ /	մ	28,0	0,057	1,60
7	1	Քարերի հավաքում բուլդոզերով 96կՎտ, տեղափոխումով 30մ	մ ³	3,5	0,434	1,52
8	1	Ընտրված քարերի բարձում ինքնաթափ	մ ³	3,5	1,018	3,56
9	1	Քարերի տեղափոխում 3 կմ	տ	5,6	1,207	6,76
10	1	Գաբիոնի տեղադրում ափերում և հունում	մ ³	3,5	5,784	20,24
ՕԿՁ-ի ցանկապատում փշալարով					0,000	
1	1	3-րդ կարգի գրունտներում փոստրակի մշակում ձեռքով	100մ ³	0,018	208,723	3,76
2	1	Պողպատե սյուների տեղադրում	տ	0,160	48,213	7,71
3	1	Պողպատե խողովակ d=48x3մմ	մ	41,600	1,814	75,46
4	1	Պողպատե խողովակ d=32x3մմ	մ	9,600	1,214	11,65
5	1	հենարանների հիմքերի կառուցում B - 7,5 դասի բետոնից	մ ³	1,8	45,015	81,03
6	1	Ավելորդ բնահողի փռում տեղում	100մ ³	0,018	106,638	1,92
7	1	Ցինկապատ փշալարերից ցանկապատի կառուցում	մ	610,000	0,987	602,07
8	1	Մետաղական դռնակի պատրաստում և տեղադրում	տ	0,029	233,426	6,77
9	1	Պողպատե անկյունակ 50*50*5մմ	մ	6,000	2,180	13,08
10	1	Ամրալար Ա-1 Մ6	տ	0,0007	701,743	0,51
11	1	Ծիսնի	հատ	2,000	0,883	1,77
12	1	Կոռաքե կահույի	հատ	1,000	2,942	2,94
13	1	Մետաղական մակերեսների համակոռոզիոն ներկում 2 շերտ	100մ ²	0,085	68,639	5,83
Ձրագծի, Զողային աշխատանքներ					0,000	
1	1	3-րդ կարգի բնահողի մշակում էքս.	1000մ ³	0,375	533,585	199,99
2	1	4-րդ կարգի բնահողի մշակում էքս.	1000մ ³	0,405	697,009	282,15
3	1	4-րդ կարգի բնահողի մշակում էքս.	1000մ ³	0,295	941,307	277,87
4	1	3-րդ կարգի բնահողի լրամշակում ձեռքով	100մ ³	0,378	231,411	87,47
5	1	4-րդ կարգի բնահողի լրամշակում ձեռքով	100մ ³	0,700	408,125	285,69
6	1	Խողովակաշարի տակի նախ. շերտ փափուկ բնահողից	մ ³	134,300	1,872	251,41
7	1	Խողովակաշարի պաշտպ. շերտի իրականացում փափուկ բնահողից	մ ³	268,700	1,872	503,01
8	1	3-րդ կարգի բնահողի հետիցք և հարթեցում բուլդոզերով մինչև 10մ տեղափոխումով	1000մ ³	0,672	157,233	105,63
Մոնտաժային աշխատանքներ					0,000	0,00
1	1	Խմելու ջրի համար պլոխեթիլենային խողովակի մոնտաժում d=50մմ պատի հաստ. 3,0մմ 10,0մմ/ճնշ.	մ	2687,000	1,273	3420,55
	1	D=50մմ խողովակի այնպիսի փորձարկում	մ	2687,000	0,09	233,77
2	1	Պողպատե խողովակից պաշտպանիչ պատյանի մոնտաժում d=102x3,0մմ	մ	57,000	5,385	306,95
3	1	Պողպատե խողովակների d=102մմ բիտումառետիլային հակակոռոզիոն ներկում	մ	57,000	3,074	175,22
4	1	Ձրագծի լվացում, վարակազերծումով	կմ	2,687	91,963	247,10
5	1	Ասֆալտի ծածկի բանդում (նախորդը ասֆալտի շերտի սղոցով կտրելով)	100մ ³	0,010	433,834	4,12
6	1	Քանոնաված ասֆալտի բարձում ինքնաթ. ձեռքով	տ	1,900	0,597	1,13
7	1	Գոլություն ունեցող ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3կմ	տ	1,900	1,426	2,71
8	1	Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստությ.	100մ ²	0,06	124,104	7,69
9	1	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4, 12 կ/ 1մ ²	տ	0,030	278,950	8,37
10	1	Ծածկի շերտի իրականացում 6 սմ հաստությ. խոշոր հատիկ ա/բ խախնուողից	100մ ²	0,062	413,574	25,64
11	1	Ծածկի շերտի իրականացում 4 սմ հաստությ. մանրահատիկ ա/բ խախնուողից	100մ ²	0,062	475,525	29,48

12	1	Խողովակի ջրամեկուսացում հանքային բամբակով և ֆոլգայով d=50մմ	մ ³	0,50	39,957	19,98
13	1	Պողպ. խողովակ-պատյանի և կանգնակների երկշերտ յուղաներկում	100մ ²	0,07	93,492	6,64
14	1	Տարածքի մաքրում թփուտներից	1000հատ	0,520	31,766	16,52
Թողարկ հորի կառուցում /9 հատ/					0,000	0,00
1	1	Բետոնե բարձիկների կառուցում Կ-12,5 դասի	մ ³	0,710	43,771	31,08
2	1	Հավաքովի ե/բետոնե դիտահորի կառուցում	մ ³	2,97	31,493	93,53
3	1	Ե/Բ դիտահոր Մ1000մ	հատ	9,00	26,967	242,70
4	1	Ե/Բ կափարիչ 1200*1200	հատ	9,00	98,063	882,57
5	1	Թուֆե մտոց d=530մմ	հատ	9,00	60,819	547,37
6	1	Խողովակաշարի տակ խճի նախաշերտ 100մմ հաստ.	մ ³	1,80	37,965	68,34
7	1	Մետաղական աստիճանների մոնտաժում	տ	0,11	98,702	10,86
8	1	Մետաղական մակերեսների համակոռոզիոն ներկում 2 շերտ	100մ ²	0,090	57,840	5,21
9	1	Պողպատե խողովակից պաշտպանիչ պատյանի մոնտաժում d=51x3,0մմ	մ	51,000	3,142	160,24
10	1	Պողպատե խողովակների d=51մմ բիտումառետիկային հակակոռոզիոն ներկում	մ	57,000	1,862	106,13
11	1	Բետոնե հենարանների կառուցում Կ-15 դասի	մ ³	0,200	47,295	9,46
12	1	Պ/Է եռաբաշխիչի տեղադրում /գողվող/ d=50x50x50մմ	հատ	9,00	4,702	42,32
13	1	Պ/Է կցաշաղթի տեղադրում /գողվող/ d=50մմ	հատ	9,00	3,193	28,74
14	1	Պողպատե ազատ կցաշաղթի տեղադրում d=57մմ	հատ	9,00	4,509	40,58
15	1	Պողպատե կցաշաղթերի տեղադրում /գողումով/ d=57մմ	հատ	9,00	4,609	41,48
16	1	Գնդիկավոր փականների տեղադրում d=50մմ	հատ	9,00	9,104	81,94
17	1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	100մ ³	0,160	408,125	65,30
Օդահեռ հորեր					0,000	0,00
1	1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	100մ ³	0,051	408,125	20,81
2	1	Հավաքովի ե/բետոնե դիտահորի կառուցում	մ ³	2,64	31,493	83,14
3	1	Ե/Բ դիտահոր Մ1000մ	հատ	8,00	26,967	215,74
4	1	Ե/Բ կափարիչ 1200*1200	հատ	8,00	98,063	784,50
5	1	Թուֆե մտոց d=530մմ	հատ	8,00	60,819	486,55
6	1	Մետաղական աստիճանների մոնտաժում	տ	0,10	98,702	9,87
7	1	Պողպատե խողովակից պաշտպանիչ պատյանի մոնտաժում d=51x3,0մմ	մ	16,000	3,142	50,27
8	1	Պողպատե խողովակների d=51մմ բիտումառետիկային հակակոռոզիոն ներկում	մ	16,000	1,862	29,79
9	1	Պ/Է եռաբաշխիչի տեղադրում /գողվող/ d=50x50x50մմ	հատ	8,00	4,702	37,62
10	1	Պ/Է կցաշաղթի տեղադրում /գողվող/ d=50մմ	հատ	8,00	3,193	25,54
11	1	Պողպատե ազատ կցաշաղթի տեղադրում d=57մմ	հատ	8,00	4,509	36,07
12	1	Պողպատե կցաշաղթերի տեղադրում /գողումով/ d=57մմ	հատ	8,00	4,609	36,87
13	1	Գնդիկավոր փականների տեղադրում d=50մմ	հատ	8,00	9,104	72,83
14	1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, տոփանումով, 10սմ հաստությամբ	մ ³	1,15	14,641	16,84
15	1	Բետոնե հիմքերի կառուցում Կ-12,5 բետոնից	մ ³	0,63	60,379	38,04
16	1	Բետոնե հենարանների կառուցում Կ-15 դասի	մ ³	0,180	47,295	8,51
Մարիչ հորեր					0,000	0,00
1	1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	100մ ³	0,060	408,125	24,49
2	1	5-րդ կարգի գրունտի մշակում պնեվմատիկ մոբոնով	100մ ³	0,11	1273,989	135,04
3	1	Խողովակաշարի տակի նախ. շերտ փափուկ բնահողից	մ ³	1,000	1,872	1,87
4	1	Խողովակաշարի պաշտպ. շերտի իրականացում փափուկ բնահողից	մ ³	2,800	1,872	5,24
5	1	Հետիցք և թմբապատում ձեռքով տեղի փափուկ բնահողից	մ ³	10,000	1,872	18,72
6	1	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում ձեռքով	100մ ³	0,0300	118,230	3,55
7	1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, տոփանումով, 15սմ հաստությամբ	մ ³	0,31	14,641	4,54
8	1	Բետոնե հատակի կառուցում Կ-15 դասի բետոնից, 100մմ հաստությամբ	100մ ²	0,00	530,585	1,11
9	1	Բետոնե հենարանների կառուցում Կ-15 դասի փականների տակ	մ ³	0,020	47,295	0,95
10	1	Մետաղական մարիչ հոր պողպատե խողովակից	տ	0,54	109,461	59,11
11	1	Պողպատե խողովակ d=1220*12մմ	մ	1,50	260,960	391,44
12	1	Թիթեղ պողպատե հարթ 12մմ	մ ²	0,810	59,781	48,42
13	1	Երկարացված վզիկով մետաղական մտոցի մոնտաժում	տ	0,12	65,731	7,89
14	1	Սարիչ հորի և մետաղական մտոցի բիտումառետիկային հակակոռոզիոն ներկում	100մ ²	0,11	93,492	10,35
15	1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, տոփանումով դիտահորի տակ, 15սմ հաստությամբ	մ ³	0,2	14,641	2,93
16	1	Բետոնե հիմքերի կառուցում Կ-12,5 բետոնից	մ ³	0,15	60,379	9,06
17	1	Հավաքովի ե/բետոնե դիտահորի կառուցում	մ ³	0,33	31,493	10,39
18	1	Ե/Բ դիտահոր Մ1000մ	հատ	1,00	26,967	26,97
19	1	Ե/Բ կափարիչ 1200*1200	հատ	1,00	98,063	98,06
20	1	Թուֆե մտոց d=530մմ	հատ	1,00	60,819	60,82
21	1	Պ/Է կցաշաղթի տեղադրում /գողվող/ d=50մմ	հատ	4,00	3,193	12,77
22	1	Պողպատե ազատ կցաշաղթի տեղադրում d=57մմ	հատ	2,00	4,509	9,02
23	1	Պողպատե կցաշաղթերի տեղադրում /գողումով/ d=57մմ	հատ	3,00	4,903	14,71
24	1	Թուֆե սողակավոր փականների տեղադրում d=57մմ	հատ	2,00	23,372	46,74
25	1	Մետաղական աստիճանների մոնտաժում	տ	0,02	98,702	1,97
26	1	Պողպատե ձագար DN 110/57մմ	հատ	1,000	5,482	5,48

27	1	Պողպատե խող. d=57x3,0մմ	մ	4,000	2,303	9,21
28	1	Պողպատե խող. d=108x4,0մմ	մ	7,700	6,112	47,06
29	1	D=57մմ խողովակի պնեմատիկ փորձարկում	մ	4,000	0,09	0,35
30	1	D=108մմ խողովակի պնեմատիկ փորձարկում	մ	7,700	0,10	0,75
31	1	Օդափոխության պողպատե խող. d=57x3,0մմ	մ	0,700	2,303	1,61
32	1	Ցանց օդափոխության համար d=57մմ	հատ	1,000	1,324	1,32
33	1	Ջրագծի լվացում վարակագրծումով մինչև d=57մմ	100մ	0,010	7,093	0,07
34	1	Մարիչ հորի լվացում և վարակագրծում	մ ³	1,750	0,168	0,29
Մետաղական հենարան					0,000	0,00
1	1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	100մ ³	0,015	408,125	6,29
2	1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, տոփանումով ուստահորի տակ. 15սմ հաստությամբ	մ ³	0,29	14,641	4,25
3	1	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5 բետոնից	մ ³	1,41	60,379	85,13
4	1	Երկարացված վզիկով մետաղական մտոցի մոնտաժում	տ	0,12	52,368	6,53
5	1	Յենարան պողպատե խող. d=102x3,0մմ	մ	9,600	4,207	40,39
6	1	Պատյան պողպատե խող. d=102x3,0մմ	մ	7,000	4,207	29,45
7	1	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում	100մ ²	0,08	93,492	7,11
8	1	խողովակի ջրամեկուսացում հանքային բամբակով և ֆոլգայով d=50մմ	մ ³	1,00	39,957	39,96
Բաղանիս գյուղի խմելու ջրի արտաքին ցանցի կառուցում					0	0,00
